

մարդկային անձամբն՝ ապա Քրիստոսին երկու անձինք են,  
 425 և գտանիս նստոր: Արդ աստուած բանն աճեաց իւրով  
մարմնովն և արամեցաւ իւրով հոգւովն և անտրառում է,  
իւրով աստուածութեամբն. և ոչ են երեք, զոր աւրինակ  
ծնաւ ի Հաւըէ և ծնաւ ի մաւրէ և ոչ է երկածին, այլ  
միածին:

## Յ-

G Ճառընտ. 943 (=Կազ. 923), տես լեռել:  
[Եջ 120ա—121ա]

Երանելոյն Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի  
Յաղագս Հաւատոյ.

Երկնաշրաշ և աստուածարեալ ժողովն որ ի Նիկիայ  
եղեալ վասն Առիոսի ի Կոստանդիանոսէ թագաւորէ: Զի  
աղեքսանդրացին այն արարած զԱրդին Աստուծոյ դա-  
ւանէր, վասն որոյ ժողով եղեալ աղդմամբ սուրբ Հոգ-  
 5 ւոյն, տարամերժեալ պարաբարձումն լինէր նմա: Եւ լու-  
սաւորէին զեկեղեցի աստուածասահման կանոնաւ՝ որ  
յԵրուսաղէմ եպիսկոպոս Մակարիոս, ի Հոռվմ Յուլիոս,  
յԱղեքսանդրի Աղեքսանդրոս, յԱնտիոք Եւստաթիոս, ի  
 40 Կոստանդինուպատլիս Աղեքսանդրոս, ի Հայս սուրբն Գրի-  
գոր:

Իսկ Կոստանդինուպատլիսի ժողովն վասն Մակեդովնի  
հոգեմարտին եղե, որ Հայհոյէր զՀոգին սուրբ և ոչ Հաւը  
և Որդւոյ յէութենէ ասէր, այլ որպէս արբանեակ և  
սպասաւոր հրամանաց Հաւը, որպէս զմի ոքի հրեշտակաց:  
 45 Յաղագս որոյ ժողովեալի Կոստանդինուպատլիս պատրիարզք  
թուռվ հարիւր և յիսուն պարաբարձումն առնեն նմա և

Հոգեմարտ անուանեն։ Եւ էր յԵրուսաղեմ եպիսկոպոս  
Կիւրեղ, ի ՀռոմԴաստղիոս, յԱղեքսանդր Տիմոթեոս, յԱն-  
տիոք Մեղիտոս, ի Կոստանդինուպատլիս Նեքտառիոս, ի  
20 Հայս սուրբն Ներսէս։

Ապա յաւուրս փոքր Թէովզոսի այլ ոմն երեեալ թու-  
նաւոր աւձապատիլը վիշաղագլուխ Նեստոր անուն, որ  
տարական[ոն] թղթով աղանդէր զաշխարհս։ Զի էր Հայրա-  
պետ Կոստանդնուպատլուսի և զՍամոստացւոյն Պաւղոսի  
25 զՀայ Հոյութիւնն Հաստատէր՝ շարայարմարութիւն զերկուց  
բնութեանցն պատկանելով ի տնաւրէնութիւն Բանին Աս-  
տուծոյ։ Վասն որոյ պատճառի ժողովեալ արքեպիսկոպոսը  
երկերիւր ի Հռչակեալն յԵփեսոս անտարբական սրովն  
Հատանէին տարամերժելով ի տարաբնակ կոյս կղզեաց։ Եւ  
30 էր յԵրուսաղեմ եպիսկոպոս Յորնաղ, ի Հռովմ Կղեստիա-  
նոս, յԱղեքսանդր Կիւրեղ, յԱնտիոք Յովհաննէս, ի Կոս-  
տանդինուպատլիս Նեստոր Հայ Հոյիչ, ի Հայս մեծն Սահակ։  
Ապա յետ ելիցն երանելոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ,  
որ Հեղինակ սիւնՀոգոսին էր յԵփեսոս, բորբոքէր նոյն  
55 աղանդ ի Փղարիանոսէ և ի Թեողորիտէ։ Եւ ոմն Եւտիքէս  
Հայ Հոյիչ ընդղիմաղրէր Հտկառակ Փղարիանոսի։ զի նոքա  
սոսկ մարդ ասացին զՔրիստոս, և Եւտիքէս Համագոյ գոլ  
զմարմինն սուրբ ի կուսէն ասէր։ Ապա եղեալ երկրորդ  
ժողով յԵփեսոս ի նոյն թագաւորէն Թէովզոսէ, նզովեցին  
40 զՓղարիանոս և զԵւտիքէս։ Խոկ Եւտիքէս զղջացեալ ըստ  
ժամանակին խոստովանէր զյանցանս իւր, դաւանէր զզիւ-  
րաղոնն՝ տայր ժողովրդեանն և լինէր տու ժամն ընդունելի։  
Եւ Փղարիանոս և Համախոհը իւր լուծեալը լինէին ի Հայ-  
րապետական պատուոյն ի Կիոսկորոսէ Հեղինակէ ժողովոյն։  
45 Եւ էր յԵրուսաղեմ եպիսկոպոս Յորնաղ, ի Հռովմ Վեոն,  
յԱղեքսանդր Դէոսկորոս, ի Կոստանդինուպատլիս Փղա-  
րիանոս, ի Հայս մեծն Սահակ։

իսկ յետ փոխելոյն բարեպաշտ թագաւորին Թէոդոսի՝  
Մարկիանոս թագաւորէ: Եւ վրէժինդիր եղեւ լուծմանն  
50 Նեստորի, և ետ հրաման ինքնիշխան կամաւ: յաւետամ-  
բոխ սիւնչողոս հանդիսանան ի Քաղկեդոն վեց հարիւր  
երեսուն և վեց եպիսկոպոս: Որ և բազումք ի նոցանէ,  
Էին յնիւթեան ի յառաջնում և յերկրորդում ժողովոյն,  
որ ոչ կամաւ եկին ի Քաղկեդոն, զի զոր քակեցին դարձեալ  
55 շինիցին: Քանզի ահ սպառնալեաց ի թագաւորէն հասեալ  
պակեան ժողովն: Զի նախ առաջին զերանելին Դէոսկորոս  
աքարտէին Եւտիքէ անուամբն և լուծեալ զնա յաքսորս  
ի Կիզիկոն: ապա և զՏիմոթէոս և զբազումն զայլս: Եւ  
էր յերուսաղէմ եպիսկոպոս Յորնազ, ի Հռովմ Դեովին,  
60 յԱղեքսանդր Դէոսկորոս, ի Հայո Սուրբն Սահմակ:

## 4-

2եռ. № 102 Դէորդ. 8ուց. տես վերևը:  
[էջ 186ա]

Պնտրոս Սիւնեաց եպիսկոպոս ասէ.

Ծնանիւր կմանուէն մարդացեալ՝ յիմանալի բովս  
զմարդկութիւնն յաստուածութեանն հրացուցեալ. քան-  
զի աստուած է եւ ամենայն ինչ հետեւի սմա. թէպէտ  
5 ամալ եւ մէգ շուրջ զնովաւ, այլ ինքն լոյս է. թէպէտ  
եւ ի բաժակ մահու խոնարհի, այլ ինքն անմահ է եւ  
անապական:

ՆՈՐԻՆ: Ի սուրբ եւ յանարատ կուսէն միացոյց իւր  
մարմին եւ արար երկնաւոր հաց, վասն իւր ի յերկ-  
40 նուատ իջիցն, եւ կոչեաց կերակուր և ըմպելի եւ կեցու-  
ցիչ ճաշակաւզաց զնա:

[էջ 189թ]

Եւ դարձեալ Պետրոս ի ծննդեան ծառին ասէ.

Որպէս ի սկզբանն Բանն արտաք՝ եկեալ ի ծոցոյ Հաւը  
անբաժանաբար ասէր՝ Եղիցի լոյս, և մի ըստ միոջէ զվե-  
45 ցերեակն յանկէր աւուրց սրանչելագործութիւն, դոր  
ի ձեռն տարաւրէնութեան ասպականեալ կորոյս նախա-  
հայրն վասն որոյ անտանելի բերելով Որդւոյն քան զմար-  
դասիրութիւնն՝ անապականաբար մարմնացաւ ի որբոյ  
կուսէն:

20 ՆՈՐԻՆ: Հին աւրէնքն և նոր բանն առժամայն աւրի-  
նակն մշտնջենաւոր շնորհի անապական տէր:

2. № 1989, 2, գրուած է 1699—1702 Փրկչ. թուին.  
թուղթ, նօտր. վկայութեանց Հաւաքումն է Վարդան  
վարդապետի:

[էջ 83ա]

ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՈց ՔԵՐՊՈՂԻ

Վանդի աստուած է, որպէս և կամի առնէ. թէպէտ և  
խոնարհի [ի] բաժակ մահու՝ անմահ էր, թէպէտ և չար-  
25 չարի, այլ լուծիչ է չարչարանացն:

Նորին յետ սակաւուց

Արդ այս ամենայն՝ աստուածախսոն գործ է և ոչ մար-  
դոյ լոկոյ, զի ծնաւ. ի կուսէ աստուած թանձրացեալ  
ընութեամբ մարդոյ՝ խառնեալ ընդ Աստուծոյ անքակ-  
50 տելի խառնումն:



13 2. ԽԱՂԾԲԱՆՆ 15-16 2. ՊԼԵՍԵՐԵԿԵԱԿՆ 17 2. որդոյն 18 2.  
անապաբար 21 2. մշտընջենաւոր  
8. 21-30 Առյն հատուածը կայ և № 1537, 1. Զեռագրում, [էջ  
40 թ] որ է «Արմատ Հաւատոյ Թուի. Մայրականեցւոյ», թուղթ,  
անթուականն, նոտր: Այս ձեռագրի տարբերութիւններն են՝ տող  
22 Մոլուսի Հայոց ի քերթողի 23 և որպէս 29 մարդ խառնեալ  
ընդ աստուած